ՓՈՒՆՋ

ԹԻՒ 1196 | ՉՈՐԵՔՇԱԲԹԻ | 1877 ՅՈՒԼԻՍ 27

ԱԶԳԱՅԻՆ

Գաւառաբնակ ազգայնոց վրայ վերջին քանի մ՛աւուրց մէջ մեր ընդունած տեղեկութիւններէն՝ հետևեալներն միայն կրնամք հրատարակել, որք յատկապէս Պատրիարքարանի ուշադրութեան արժանի են.

Արապկիրի առաջն. արժ. տեղապահն տեղւոյն կառավարական ժողովոյն մէջ՝ խարբերդէն պաշտօնով եկած Ճաֆէրեան էֆէնտիէն նախատուեր ու անարգուեր, և հարկադրեր է դուրս ելնել: Այս նախատինքը կրեր է, առաջարկութեան մը վրայ տեղւոյն ազգային ժողովոց խորհրդակցութեան դիմելու հարկը յայտնած ատենը: Պատրիարքարանը արժան կը համարի՞, այս մասին պէտք եղած քննութիւնն ընել, և եթէ անպարտ է առաջնորդական տեղապահքն, նորա և հետևաբար Պատրիարքարանի պատուոյն նախանձախնդիր ըլլալ:

Ամասիոյ ազգային սնտուկէն՝ Սեբաստիոյ կուսակալութեան մէկ յատուկ հրամանագրովն, այս օրերս գումար մը կը պահանջուի, որ քանի մը տարի յառաջ քննութեան պաշտօնով Ամասիա գացող Սեբաստիոյ առաջնորդ գեր. Պետրոս վարդապետի ծախուց համար է եղեր: Կարելի՞ է որ Պատրիարքարանը առ այժմ յետաձգել տայ այս ծախուց վճարման խնդիրը, քանի որ Ամասիոյ վիճակին մէջ այժմ՝ առաջնորդ, ժողով և սնտուկ չկայ, և քանի որ նախ քան զամենայն հարկ է այս մասին պարտուպատշաճ տնօրինութիւնն ընել:

Թէ՛ Արապկիրի և թէ՛ Ամասիոյ սոյն խնդրոց վրայ արդէն բաւական ծանօթութիւն տրուած ըլլալով՝ աւելորդ կը համարիմք երկարօրէն գրել, և կյուսամք թէ մեր քչէն շա՛տ իմաստասիրել կարող է Պատրիարքարանը:

—

Հրաւիրագրեր ցրուեցան երէկ առ երեսփոխանսն, առաջիկայ ուրբաթ օրը նիստ ընելու, և կեդրոնական սնտուկին հաշուէկշռի քննութեամբն ու վարժարանաց բարեկարգութեան հրահանգի խնդրովն զբաղելու համար:

Նոյն օրը քաղաքական ժողովոյ անդամակցութեան համար 11 անձինք ալ պիտի ընտրուին, պատրաստեալ երկպատիկ ցանկին վրայ: Արդէն ընտրելեաց մէջէն միայն երեքը հրաժարած չեն, որք են՝ Ալեքսանեան Մատթէոս էֆէնտի, տոքթոր Փէշտըմալճեան էֆէնտի, և Կիւլպէնկեան Աբէլ էֆէնտի: Պարտիմք շնորհակալութիւն մատուցանել սոցա, իրենց ազգասիրութեան եղած հրաւէրն ընդունած ըլլալնուն համար:

═

Տիգրանակերտէն հետեւեալն գրած են յուլիս 8 թուով:

« Բնիկ տրապիզոնցի մեծ. Յովհաննէս Յարութիւնեան ազնիւ երիտասարդը, որ բաւական ժամանակէ ի վեր տեղս կը գտնուէր, անցեալ ամիս մի անդարմանելի ախտի ենթակայ լինելով անգութ մահուան հատու մանգաղովն հնձեցաւ յունիս 24ին ի հասակի ամաց երեսնից, թողլով ի սուգ անմխիթար ազգականք և բարեկամք, նա մանաւանդ տեղւոյս Հայրենասէր ընկերութիւնը, որոյ հիմնադիրներէն մին լինելու պատիւն ունենալէ զատ գրեթէ տարի մի է որ յիշեալ բարեհամբաւ ընկերութեան վարժարանի հոգաբարձութեան փափուկ պաշտօնն ըստանձնելով անթերի և յօժարակամ կը կատարէր ընդ պաշտօնակիցս իւր, զայս մի նուիրական գործ համարեալ: Եւ իւր բաժնիկ ևս (մէկ օսմ. ոսկի) վճարած էր:

« Հանգուցեալն իւր ազգասիրական և հայրենասիրական ընտիր բարեմասնութիւններովն երեւելի, և իւր մեղուշ և ճշմարտախօս բնաւորութեամբն սիրելի եղած էր ամենուն:

« Հանգուցելոյն յուղարկաւորութեան հանդէսը խիստ շքեղութեամբ կատարուեցաւ ի Ս. Կիրակոս Մայր եկեղեցին:

« Ներկայ էին սոյն յուղարկաւորութեան հանդիսին, կղերական դասը, հարիւրաւոր հայազինք, օտարազինք, հեռագրական և այլ և այլ պաշտօնական անձինք:

« Ընկերութեանս համայն աշակերտք՝ հանգուցելոյն եկեղեցական կարգը կատարուելէն զկնի նորա գերեզմանին շուրջը բոլորելով արտասուաթոր աչօք և գլխիվայրեալ մի քանի սրտառուչ և պարագային յարմար երգեր երգեցին. յետոյ ընկերութեանս վարժապետ մեծ. Պատ. Պետրոս Ադամեան և Պ. Սիմոն Հէքիմեան հակիրճ բայց սրտառուչ դամբանականներ խօսելով բոլոր յուղարկաւորները յարտասուս շարժեցին, և ի վերջոյ մեծ. Պատ. Ադամեանի մի դամբանական ուղերձովն և աշակերտաց հրաժեշտի ողջոյնի երգովն վերջացաւ յուղարկաւորութիւնը, հանգուցելոյն մարմինը ամփոփուելով վարժարանիս մէկ կողմը, դէթ ոգւով նորա վրայ հսկելու աղագաւ:

« Անցեալ մայիս 21ին բացուեցաւ ընկերութեանս կիւրակնօրեայ վարժարանը: Այժմ աշակերտք 60 և սահմանաւոր, որոց կը դասախօսեն Պետրոս Ադամեան և Կարապետ Պասմաճեան մեծ. Պատուելիները: Այս ազնիւ ձեռնարկին յարատեւութիւն կը մաղթենք որ միշտ շարունակուելով մի մեծ նպաստ մատուցանէ տեղւոյս երիտասարդութեան:

« Ընկերութեանս վարժարանի աշակերտաց ընդհ. քննութիւնը գալ շաբաթ պիտի սկսի. յուսամ որ այս մասին պաշտօնապէս տեղեկութիւն պիտի տրուի:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական կառավարութիւնն որոշած է՝ անխտիր բոլոր հպատակներէն ներքին փոխառութիւն մ՛ընել, ի նպաստ ներկայ պատերազմական ծախուց, հետևեալ կանոնադրութեան համաձայն՝ զոր թարգմանելով կհրատարակեմք ի ծանօթութիւն մերայնոց:

Յօդ. Ա. – Անխտիր բոլոր հպատակներէն հարկադրեալ (մէճպուրի) փոխառութիւն մը պիտի ըլլայ, միայն պատերազմական ծախուց յատկանալու պայմանաւ:

Բ. – Այս փոխառութիւնը հարկադրեալ է, և բոլոր հպատակներէն պիտի առնուի՝ իրենց հարստութեան ու կարողութեան չափով:

Գ. – Այս փոխառութեան տարեկան տոկոսը՝ 100ին 10, և ի հաշիւ գլխավճարին՝ տարին 100ին 5 է:

Դ. – Այս փոխառութեան բոլոր ռումարը՝ 600 միլիոն ղրուշէ պիտի բաղկանայ:

Ե. – Ընդհանուր ժողովոյ որոշմամբ և կայսերական հրամանաւ, այս փոխառութեան տոկոսին և գլխավճարին հատուցման յատկացեալ է՝ հաշուէկշռին մէջ գտնուող և բոլոր գումարն 669 հազար 783 քսակէ բաղկացեալ ընդհանուր տըրոց (վէրկուի ումումի) 180 հազար քսակը:

Զ. – Ամեն մէկուն հարստութիւնն ու կարողութիւնը որոշելու և սահմանելու համար ստոյգ կշիռ մը առձեռն չըլլալուն պատճառաւ, հարստութեան ու կարողութեան չափ համարուած են՝ իւրաքանչիւրին ունեցած կալուածն, առուտուրն, շահն (թէմէթթու) արքունի դանձէն առած Էսհամի, Մուգաթաաթի և Զիամէթի փոխարէնն (պէտէլաթ) և ամսէ ամիս առնուած ամսականներն:

Է. – Այս փոխառութիւնը՝ ամեն մէկուն Էմլաքի, Ագարի և Թէմէթթուի համար տուած տարեկան տրոց չափ պիտի ըլլայ. իսկ Էսհամի, Մուգաթաաթի Թիմարաթի և Զիամէթի 100ին 10ը, և ամսականներուն երկու ամսականին հաւասար պիտի ըլլայ:

Ը. – Օսմանեան հպատակ ամեն մէկ անհատի որոշեալ և արձանագրեալ Էմլագի, Ագարի և Թէմէթթուի տրոց մէկ չափն, (պիր միսլի) և Էսհամի ու Մուգաթաաթի փոխարէնին 100ին 10ը՝ ո՛րչափ որ է, չորս հաւասար բաժնով, չորս ամսոց մէջ ամսէ ամիս պիտի առնուի. և ներկայ 1293 տարւոյ յուլիս՝ օգոստոս, սեպտ. և հոկտ. ամսոց մէջ պիտի հաւաքուի տրոց հաւաքման պէս հաւաքչաց ձեռօք:

Թ. – Ինչպէս ուրիշ անհատներէ, նոյն-

պէս և ամսական ունեցողներէ՝ Էմլաքի և Ադարի կալուածական տրոց մէկ տարեկանը, և Էսհամի ու Մուգաթաաթի փոխարէնին 100ին 10ը առնուելէն զատ, ամսականներուն ալ երկու պատիկը պիտի առնուի, և Թիմար և Զիամէթի տէրերէն Թիմարի և Զիամէթի փոխարէնին 100ին 10էն գոյացեալ դումարն ալ՝ դարձեալ յուլիս, օգոստոս, սեպտ. և հոկտ. ամսոց մէջ դանձապահներու (մալ մէմուրը) ձեռքը պիտի հաւաքուի։

Ժ։— Ամսականներէն առնուելիք դումարը՝ պաշտօնի վրայ եղող մեծ ու փոքր ամեն պաշտօնակալներէն անխտիր պիտի առնուի։ Բայց զինուորներէ և ոստիկաններէ (նէֆէր), և փոքր սպաներէ ու մինչև Գօլ-աղասիի աստիճան եղող սպաներէ չառնուելով՝ Ալայ-էմինի, հաղարապետ և անոնցմէ վեր եղող մեծ սպաներէ ու հրամանատարներէ պիտի առնուի,

ԺԱ։— Այս հարկադրեալ փոխառութիւնը, եթէ մասնաւորաց ոմանք ուզեն՝ դրամի տեղ զինուորական պիտոյք եղող արմտիք տալով փոխարինել, տրուելիք արմտիքն տեղական ժողովոց միջոցաւ որոշեալ գնովն պիտի ընդունուի ու հաշուի։

ԺԲ։— Այս փոխառութիւնը, թղթադրամ չրջաբերող տեղերը՝ թղթադրամ, իսկ թղթադրամ չչրջաբերող տեղերը ֆէ։ուէ։ ու մէնճէ։ ըլլալով պիտի հաւաքուի. և ի՛նչ տեսակ դրամ որ առնուի՝ վճարման ժամանակ նոյնը պիտի վճարուի, և հետեւաբար առնուելիք դրամին տեսակը՝ տրուելիք ընկալագրոց մէջ պիտի նշանակուի։

ԺԳ։— Այս փոխառութեան արդիւնքը ուրոյն պահուելով՝ ամեն ամսոյ վերջը ելումտից պաշտօնատունը պիտի ղրկուի, միայն պատերազմական ծախուց յատկանալու պայմանաւ։ Ելումտից պաշտօնատունն ալ, տրուած հրամանին համաձայն կայսերական բանակներն ալ պիտի ղրկէ, և ընկալագրեր ընդունելով պիտի պահէ։

ԺԴ։— Այս փոխառութեան համար տրուելիք առժամանակեայ ընկալագրոց մէջ նշանակուած պիտի ըլլան՝ թիւ, տուողին անունը, դրամին կամ դրամի տեղ տրուած բանին տեսակը, և չորս բաժիններուն քանի՛ երորդն ըլլալը։ Ընկալագիրք՝ տպեալ, գունէն կտրուած, և գանձապահներուն (մալ մէմուրը) կողմանէ կնքեալ պիտի ըլլան։

ԺԵ։— Այս փոխառութիւնը 100ին 10 տոկոսով 12 տարուան մէջ ամբողջապէս պիտի վճարուի, և տուրք վճարող մասնաւորաց տրոց հաշուոյն ալ պիտի ընդունուի իբրեւ չրջաբերող դրամ, բաժիններուն վճարման ժամանակ։

ԺԶ։— Փոխառութիւնը իւրաքանչիւր անհատէ ամբողջ ընդունուելուն պէս, այսինքն 1293ի նոյեմբերի սկիզբը ամեն մէկուն ձեռքը գտնուած առժամանակեայ ընկալագրոց տեղ՝ իւրաքանչիւր փոխատուի բուն մուրհակ (սենէտ) պիտի տրուի, որ անանուն և թուաւոր պիտի ըլլայ և ամեն տարւոյ վերջը տրուելիք տոկոսին ու գլխավճարին դրամները պարունակող 12 կտրոն (գուբօն) պիտի ունենայ։

ԺԷ։— Փոխառութիւնը 12 տարուան վերջը ամբողջապէս և տոկոսիւքն վճարուելու համար, և ամեն մէկ բուն մուրհակին վրայ գտնուած կտրոններուն իւրաքանչիւրը՝ տոկոսին ու գլխավճարին դրամներով մէկ տեղ հաւասար քանակութիւն մը պիտի պարունակեն։

ԺԸ։— Այս փոխառութեան տոկոսն ու գլխավճարն՝ ամեն տարի նոյեմբերի սկիզբը՝ կտրոնները ներկայացուած ատեն՝ ելումտից պաշտօնատունէն, և ամեն տեղ դանձատուններէն (մալ-սանտըղը) ըստ տեսակին ամբողջ պիտի վճարուին, և ամեն տեսակ թէմէթթուի և Էմլաքի տրոց համար իբրև դրամ պիտի ընդունուին։

ԺԹ։— Այս փոխառութեան համար տրուելիք կտրօնաւոր մուրհակները՝ չորս տեսակ պիտի ըլլան, 50, 100, 500 և 1000 նոց։ Ամեն տարի տրուելիք տոկոսին ու գլխավճարին հաշուոյն, և վերջին կտրոնէն զատ, մէկմէկու հաւասար գտնուելու համար, 12 կտրօն պիտի պարունակեն։

Ի։— Այս փոխառութիւնը մէկ տարուան համար և առժամանակեայ ըլլալուն պատճառաւ, ամեն տեսակ կալուածոց արժէքին վրայ տեղի ունեցած և ունենալիք դատերը ուրիշ խնդիր ըլլալով՝ այս մասին լսելի չպիտի ըլլայ։

Դրսէն մէկն եթէ առնուլ ուզէ այս մուրհակներէն՝ գլուխ գլխի պիտի արուի։

Ցանկ

Այս կանոնադրութեան մէջ թէև իրաց առեալ են՝ զօրականն ու ոստիկանք և մինչեւ Գօլ—աղասիի աստիճան ունեցող սպաս. և նշանակեալ են Ալայ—էմինի, հաղարապետ, և աստիճանաւ անոնցմէ վեր եղող սպայք ու հրամանատարք. բայց որովհետեւ ասոնք այժմ ըստ մեծի մասին թշնամւոյն դէմ պատերազմաւ զբաղեալ են, ուստի անոնցմէ փոխառութիւն ընելը յետաձգել որոշեց Բ. Դուռը, և կայսերական հրամանաւ հաստատուեցաւ։

Այսօր կհրատարակեմք նաև մայրաքաղաքիս Մէվքիպի-Հիւմայուն Թապուրլէրի (կայսերական վաշտք) անուամբ քաղաքապահ զինուորագրութեան կանոնադրութիւնը՝ Թագվիմի-Վագայի պաշտօնական լրագրէն թարգմանելով։

Ցոր. Ա. — Իւրաքանչիւր ընտրական շրջանակի մէջ յարմար տեղ մը նոյն շրջանակին երեւելիներէն յանձնաժողով մը պիտի կազմուի, ընդ նախագահութեամբ կանոնաւոր զինուորութեան սպայի մը, որ առնուազն Գօլ-աղասիի աստիճան ունենալու է։

Բ. — Այս յանձնաժողովը՝ իւր շրջանակին մէջ գտնուող և ի ներքոյ նշանակեալ հասակէ անձինքն պիտի գրէ, և յիշեալ վաշտերուն համար պիտի արձանագրէ։

Գ. — Մայրաքաղաքիս 20 էն մինչև 40 տարեկան բնակիչք՝ պարտաւոր պիտի ըլլան արձանագրուիլ և որոշեալ օրերու ու ժամանակներու մէջ կրթութիւն առնուլ։ Սակայն այս հասակի անձանց մէջէն զինուորական պաշտօնի անկարող կաղմուած ունեցողներուն համար բացառութիւն պիտի ըլլայ, յետ քննութեան և հաստատութեան։

Դ. — Արձանագրեալ անուանք երբ 10ի հասնին՝ անոնց մէջէն արժանաւորագոյնքն ու յարմարագոյնը յանձնաժողովոյն միջոցաւ զատուելով, տասնապետ պիտի ընտրուի։ Տէրութեան կողմանէ աստիճան ու պաշտօն ունեցողները, և գէթ կարդալ ու գրել գիտցողները նախագաս պիտի ըլլան։ Ոճրագործութեամբ և յանցանօք արատաւորեալք սպայութեան համար չպիտի ընտրուին։

Ե. — Երկու տասնապետաց ջոկատներուն (թագըմ) մէջէն մէկ Զաւուշ, և չորս Զաւուշներուն ջոկատներուն մէջէն 1 Պաշ-չաւուշ պիտի ընտրուի։ Պաշ-չաւուշէն վեր, այսինքն՝ Միւլազիմէն մինչև հաղարապետ եղող սպայից ընտրութիւնը՝ զինուորական պաշտօնատան կողմանէ պիտի ըլլայ, և այս աստիճանի սպայութեան համար թէ՛ զինուորական և թէ՛ քաղաքական կարգէ անձինք պիտի առնուին։

Զ. — Պաշտօն ունեցողներուն պաշտօնը՝ իրենց վրայ պիտի մնայ։

Է։ — Վաշտերը 500 էն մինչև 800 հոգիէ պիտի բաղկանան։ Ամեն շրջանակի մէջ յիշեալ հասակի մարդոց թուոյն համեմատ վաշտ պիտի բացուի։

Ը։ — Այս վաշտերուն մէջ գտնուող անձինքն՝ եթէ ուզեն՝ կրնան յատուկ ըզգեստ մը հագնիլ, ցուցուելիք օրինակին համաձայն։ Բայց՝ զէնք և հրանիւթ, և բանակատեղին ժողովուած ատեններին՝ իրենց պարէնք տէրութեան կողմանէ կը տրուի զինուորական պաշտօնատան միջոցաւ։

Թ. — Այս վաշտերը պիտի ժողովուին մայրաքաղաքին դուրսը նշանակուելիք բանակատեղին, և մէջերնուն պէտք եղած վաշտերը՝ պահպանութեան և զինուորական զգուշութեան (իհթիյաթիյէ) գործոց մէջ պիտի գործածուին։

Ժ։ — Այս վաշտերուն համար արձանագրեալ զինուորք՝ ցերեկն իրենց գործոց գլուխը և գիշերը տուներնին գըտնուած ատեններին, ի՛նչ ժամանակ որ լսեն՝ ի գլուխ զինուց դիմելու փողը (սիլահ պաշնա պօրուսը) անմիջապէս բանակատեղին ժողովուելու պարտաւոր են։

ԺԱ։ — Այս զօրքն, ըստ սկզբան, հետեւակ (փիյատէ) ըլլալու պայմանաւ պիտի կազմուի։

ԺԲ։ — Այս վաշտերուն զէնքը՝ զինուորական պաշտօնատան որոշելիք զօրանոցներուն և բանակատեղիին մէջ պիտի պահուի։

ԺԳ։ — Այս զօրքը շաբաթը երկու օր ոտքի և զէնքի կրթութիւնները՝ զինուորական պաշտօնատան որոշելիք զօրանոցներուն մէջ, իսկ մեծ կրթութիւնները՝ բանակատեղին պիտի ընէ։

Վերջաբան

Այս վաշտերը կայսերական հրամանաւ կկազմուին, և ի հարկին գործի դըրլուխ կկոչուին։ Նոյնպէս, կայսերական հրամանաւ, երբ ուզուի, գործէ կդադարին կամ բոլորովին կցրուին։

Անցեալները մայրաքաղաքէս աքսորեալ Շէրիֆ և Միւհէտտին էֆէնտիներուն ներում շնորհուեցաւ։ Այս անգամ՝ Մուսթաֆա, Հասան, Սապիթ և Բամիզ (փաշա) էֆէնտիներուն և այլոց ալ ներում շնորհուեր է, բաց ի Ուզուն-Էթէմ Ռիզա պէյէն։

— Եգիպտոսի Խտիվն այս անգամ ալ բանակի մը համար բաւական շարժուն հիւանդարան մը, հանդերձ բժշկօք և այլ ամենայն կարասեօք, օսմանեան զօրաց համար նուիրելէն զատ, Էմիրկէնի հիւանդանոցն ալ վիրաւոր և հիւանդ զօրաց յատկացուցեր է, բոլոր ծախքն իւր կողմանէ վճարուելու պայմանաւ։

Նորին բարձրութեան երկրորդ որդի Հիւսէյին փաշա՝ որ ելեւմտից նախարար է, ըստ հրահանգի բժշկաց՝ եգիպտական Ֆիում շոգենաւով քանի մ՚օր յառաջ Աղեկսանդրիայէն ելեր է կղզեաց ծովերը շրջագայելու համար։

— Եւրոպական լրագրաց ոմանց գրածին նայելով՝ Սերվիա, իւր պաշտօնական խոստմանց հակառակ, Ալեքսինացի կողմը՝ 18, Եավոր՝ 14, և Դանուբի եզերքը՝ 12 վաշտ զօրք ժողոված է, և թէ՝ Սերվիոյ այս ընթացքը Հունգարիոյ տագնապ կպատճառէ։

Աւստրիոյ ըրած պատրաստութիւնք՝ Սերվիոյ այս շարժմանց դէմ կհամարուին։

— Մեծ Եպարքոսն երէկ Թարապիա երթալով՝ անգղիական դեսպանին հետ տեսնուեցաւ։

— Օգոստ. Սուլթանը՝ Պէյլերպէյիի պալատան շատ մը յարկերը Բումէլիի կողմերէն գաղթեալ կարօտելոց յատկացուց. և հետերնին գտնուող արջառոց ու խաշանց արածման համար՝ Այաս-աղայի ագարակը նշանակեց։

— Եգիպտոսի Խտիվն իւր աւագանւոյն հետ Աղեկսանդրիա իջեր է, տեղւոյն օդոյն բարեխառնութեան համար։

— Իւսկիւտարի հանրակառաց խափանեալ ընկերութեան առձեռն ունեցած 100 էն աւելի ձիերուն կէսը՝ թնդանօթ քաշելու համար կառավարութեան նուիրուեր, իսկ մնացորդն ինչպէս նաև կառքերն զինուորական հիւանդարանաց համար տրուեր են։

— Պաշտօնական յայտարարութիւն մը կը հերքէ լրագրաց հրատարակած այն զրոյցը՝ թէ օգոստափառ Սուլթանին կողմանէ Եւրոպայի մէջ պաշտօն մը տրուած է Միտհաթ փաշայի։

— Սերվիայէն՝ բժիշկ, բժշկական պիտոյք և 2000 մաճար ոսկի զրկուեր է Գարատաղ։ Ասկէց կմակաբերուի, թէ Սերվիա և Գարատաղ դարձեալ բարեկամացած են մէկմէկու հետ, և Բ. Դրան ու Սերվիոյ մէջ հաշտութիւն ըլլալուն վրայ Գարատաղի մէջ ընդդէմ Սերվիոյ եղած ցրտութիւնը փարատած է։

— Քաշկարի դեսպան Եագուպ պէյ՝ 100 գաղղիական լիրա նուիրեր է ի նպաստ զինուորական ծախուց։

— Ռուսական լուրերու նայելով՝ Դանուբին այս կողմը գտնուող ռուսական զօրաց թիւն է 183 հազար. 40 հազարը Բուսճուգի և Շումնուի մէջ, 50ը Նիկօպօլի, 25ը Թրնովայի և Զիշթօվայի մէջ, 27ը Տոպրուճայի մէջ, և 26 հազարը՝ ի պահ զգուշութեան։

— Վագըթ գրած էր երէկ, թէ Բըլէվնայի պարտութեան վրայ ռուսաց կայսրն ա՛յնչափ մեծ ցաւ զգացեր է, որ երեք օր մարդ չէ ընդուներ քովը. և եղբայրը՝ Կոստանդին արշիդուքսն ալ խելագարեր է։

— Դադարեալ լրագիրներէն Լէվընդ Հերըլտ ալ սկսաւ հրատարակիլ։

— Եւրոպական տէրութեանց կողմանէ իրենց դեսպանաց ու հիւպատոսաց հրահանգ զրկուեր է, Բումէլիի մէջ ռուսաց ու պուլղարաց գործած խժդժութեանց վրայ ստոյգ և մանրամասն տեղեկութիւններ գրելու համար։

— Ռուսական բանակին մէջ գտնուող աւստրիական սպայն յատուկ պաշտօնով մը Վիէննա գացեր է։ Ֆար տիւ Պոսֆոր կըսէ որ, գացած է ծանուցանել Աւստրիոյ կառավարութեան՝ թէ Սերվիա որոշած է միջամուխ լինել ներկայ պատերազմին, առանց ունկն դնելու Աւստրիոյ յորդորանաց և սպառնալեաց։

— Գաբդան Մէհմէտ անուն մէկը, որ երբեմն Պագըրճի-պաշի է եղեր, Պօլիս Միտհաթ փաշայի ապարանքին քովը ունեցած կէս տունը՝ որ 40 հազար զրշ կարժէ, նուիրեր է ի նպաստ զինուորական ծախուց։

— Զինուորական գործոց նախորդ նախարար Բէտիֆ և նախորդ Սերտար Ապտի փաշաներուն և այլոց դատաստանին համար կազմուած զինուորական ժողովոյն նախագահ անուանեցաւ Նամըգ փաշա։ Անդամք են՝ Հալիմ փաշա, ոստիկանութեան նախարար Ահմէտ-Համտի փաշա, Սիրիոյ կուսակալ Էօմէր Ֆէյզի փաշա, և Մահմուտ՝ Հասան-Բիւշտի և Ալի-Նիզամի փաշաները։ Որոշուած է հարցաքննութեան ենթարկել նաև Շքոտրայի նախորդ հրամանատար Մահմուտ փաշան և Արտահանի հրամանատար Հիւսէյին Սապրի փաշան։

— Դատական նախարարութեան դիւանի անդամներէն և պաշտօնակալներէն 25-30 հոգի խնդրագրով մը յայտներ են մեծ Եպարքոսին, թէ պատրաստ են քաղաքապահ զօրաց կարգը մտնել, և ի հարկին պահականոցներուն մէջ գըտնուիլ և պահպանել մայրաքաղաքը։

— Պաղտատի գաւառական լրագիրը կը գրէ, թէ Մէհմէտ աղա անուն Շէյխ մը իւր եօթը որդւոց, և 400ի չափ հեծեալ ու հետևակ կամաւորաց հետ դէպ ի Վան պատերազմի վայրն ուղևորեցան, որոց մէջ երկու ալ քաջասիրտ կանայք կգտնուին։

— Օգոստ. Սուլթանն իւր թիկնապահներէն մէկքանին Էտիրնէ, Ֆիլիպէ և ուրիշ կողմեր զրկեր է, զօրաց ու բընակչաց վիճակը քննելու համար։

— Ուրբաթ գիշեր լսուած թնդանօթի ձայներուն պատճառը՝ տաճիկ լրագիրք հետեւեալ կերպիւ կհրատարակեն։ Ռուսական փոքրիկ շոգենաւ մը նեղուցին դուրսը գտնուող Շիլէի կողմերը գալով՝ փայտի ու ածուխի նաւերէն մէկն այրեր, և մէկուն ղէկը կոտորեր է. ասոր վրայ միւս նաւերը վախնալով, առադաստ պարզեր, և օդն ալ իրենց նպաստաւոր ըլլալով՝ սկսեր են դէպ ի նեղուցը խոյս տալ. սակայն որովհետեւ արգիլեալ է գիշեր ատեն նեղուցէն ներս մտնել, ուստի հետզհետէ պարապ թընդանօթներ արձակուեր են՝ յիշեալ փախստեայ նաւերուն մուտքն արգիլելու համար։

Վագըթ բարձր տեղերէ ալ ստուգեր է այսպէս ըլլալը։

Ծերակուտին նախագահ կարգեցաւ՝ Արիֆի փաշա։

— Բաղէշի գայմագամ անուանեցաւ՝ Մուսա Քեազիմ էֆէնտի։

— Ճանիկի կառավարիչ կարգեցաւ՝ Վիտինի նախորդ կառավարիչ Հաֆի փաշա։

— Երզնկայի կառավարիչ անուանեցաւ՝ Մուսուլի նախորդ կառավարիչ Վէյսի փաշա.

Ռուսիոյ կառավարութիւնը՝ 125 հազար լիրա նուիրեր է՝ Աֆղանիստանի Էմիրին, Պուխարայի Էմիրին միջոցաւ։

— Գերմանիոյ կառավարութիւնը՝ Իտալիոյ ձիաւորաց համար Գերմանիայէն ծախու առնուած 5000 ձի դրաւեր է՝ սահմանագլուխէն անցած ատենը, ձի դուրս հանելը արգիլեալ ըլլալուն պատճառաւ։ Ձիերը գերմանական բանակներուն տրուեր են, և փոխարէնը վճարուեր է իտալական կառավարութեան։

ՀԵՌԱԳԱԼՈՒՐՔ

Վիէննա. 3 Օգոստ։— Տակաւին հասարակաց ուշադրութիւնը գրաւած են՝ Բլէվնայի և Էսքի-Զաղրայի մէջ օսմանեանց ըրած յաղթութիւնները։

Կհաւաստեն, թէ Միտհաթ փաշա Պօլիս դառնալու հրաման խնդրած է։

4 Օգոստ։— Եւրոպիոյ խաղաղասիրական դիտաւորութիւնք՝ մեծ մտատանջութիւն կը պատճառեն պատերազմասէր սերվաց։ Կէս պաշտօնական լրագիրք կջանան հաւաստել, թէ ձեռք առնուած զինուորական միջոցներուն նպատակն է՝ պատերազմը սահմանափակել։

Բեդրսպուրկէն առնուած հեռագիրք՝ Ռուսիոյ մէջ յեղափոխութեան մ՚երեւան ելնելը կը ծանուցանեն։ Կհաւաստեն, թէ Կորչագօֆ իշխանը կհրաժարի։

5 Օգոստ։— Օսման փաշայի յաջողութիւնն ու յաղթութիւնը՝ Հունգարիոյ մէջ մեծ տպաւորութիւն ըրաւ. մինչև իսկ լուսավառութիւն եղաւ քանի մը քաղաքաց մէջ։

Բէչթ. 5 Օգոստ։— Երէկ երեկոյ Լէմպէրկէն եկած և Բէչթի լրագրաց մէկուն մէջ հրատարակուած հեռագրի մը նայելով՝ յուլիսի 31 ին և օգոստ. 1 ին օրերը Բեդրսպուրկի ժողովրդեան մէջ անկարգութիւնք պատահեր են. ոստիկանութիւնը չկրնալով վերահաստատել խաղաղութիւնը՝ զինուորք միջամտեր, և կրակ ընելով՝ ամբոխը ցրուեր են։ Բայց հետեւեալ օրը դարձեալ տեսնուեր է ապստամբութիւնը՝ որոց գլխաւորաց գլուխներուն վրայ կարմիր նշաններ կան եղեր։ Ռուսիոյ ուրիշ քաղաքաց և մասնաւորապէս Մոսկուայի մէջ ալ ծանր խռովութիւններ տեղի ունեցեր են։ Կառավարութիւնն այս մասին հեռագրել արգիլած ըլլալուն պատճառաւ, այս լուրն թղթատարով հասեր է մինչև Լէմպէրկ։

Լոնտրա. 4 Օգոստ։— Դարձեալ զօրք կերթայ դէպ ի Միջերկրական ծով։

Օսմանեան զօրաց վերջին յաղթութեանց վրայ՝ հասարակութիւնն ապահովիլ սկսած է։

Թայմզի գրածին նայելով՝ ծովային պաշտօնատունը հրամայած է, որ երկու նաւ պատրաստ գտնուին՝ օգոստ. 11 ին 5000 զօրք Միջերկրական ծովը փոխադրելու համար։ Սթանտարտ կգրէ, թէ Ռուսք Պալգանի միայն անցքերը բռնելով՝ միւս կողմերը պիտի պարպեն։ Ռուսիոյ պահեստի զօրաց հրաման եղած է՝ Պուլղարիա երթալ։

5 Օգոստ։— Լրագիրք կծանուցանեն, թէ Ռուսիոյ գահաժառանգին զօրքը մինչև 11 քիլոմեթր տեղ մօտեցած է Բուսճուգին, և Ռուսք Բլէվնայէն 7 քիլոմեթր հեռի կգտնուին։

Պէլկրատ. 3 Օգոստ։— Հրաման եղաւ՝ 5000 ազգային զօրք ժողովել. ասոնք սահմանագլուխը պահպանելու պիտի յատկանան. ռազմամթերք ալ պիտի զրկուի սահմանագլուխը։

Բեղրսպուրկ. 4 Օգոստ։— Ռուսաց կայսեր օգոստ. 5 թուականով մէկ հեռագիրն կհրամայէ ի զէն կոչել պահապան զօրաց առաջին կարգն, որ է 180 հազար 600 հոգի։

Եւրոպական լրագիրներէն՝

Պաթում. 28 յուլիս։ –Հօպարթ փաշայի տըրամադրութեան ներքև գտնուող օսմանեան նաւատորմիղն՝ արևելեան եղերքն պտոյտ մ'ընելէն յետոյ՝ կանգ առաւ։

Թրնօվա. 27 յուլիս։ – Պուլղարիոյ նախկին մայրաքաղաքն եղող այս քաղաքին փողոցներուն անձկութիւնը՝ արագ անցուդարձի դըժուարութիւն կպատճառէ։ Քաղաքը երկու թաղի բաժնուած է. քրիստոնէից թաղը լի է. իսկ մահմետականաց թաղը դատարկացած է, և տուներուն մէջ ո՛չ բնակիչ և ո՛չ կարասիք կը գտնուին. միայն 40 ի չափ մահմետականք գաղթած չեն, և առանձինն կբնակին։ Պուլղարաց յանձնուած են քաղաքապետութեան ու ոստիկանութեան պաշտօնները։ Աղեկսանդր կայսրը մօտերս հոս պիտի գայ։

Վիէննա. 28 յուլիս։ – Աւստրիա որևէ կերպիւ արգելք չպիտի ըլլայ՝ Անգղիոյ կողմանէ Կէլիպոլի զօրք ղրկուելուն. որովհետև նոյն ինքն Աւստրիա ալ պիտի հարկադրի մօտերս իւր զօրքն սահմանէն յայնկոյս անցունել։

ԻԼԱՆ
ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Պիր նիւմէրօ գալըն գանավաչօտան մամուլ ճուվալ ատէտ իկիրմի պէշ պին, պէհէր ատէտի տօգուզ պուչուգ ղրուշ.

Իքի նիւմէրօ գալըն գանավաչօտան մամուլ ճուվալ ատէտ իկիրմի պէշ պին, պէհէր ատէտի սէքիզ պուչուգ ղրուշ.

Ասաքիրի շահանէ էլպիսէ անպարը իչուն թարիխը գօնթրաթտան իթիպարէն թէսլիմէ պէտ իլէ օն պէշ կիւնէ գատար եէնի ճամի հավլիսինտէ թէսլիմ օլունմադ վէ պէհասը մագպուզ սէնէտլէրի վիրուտինտէ պէր վէճհը փէշին եիւզլիւք գայիմէ եիւզ ղրուշա օլարադ իթա գըլընմադ շարթը իլէ միւպայեա օլունաճադ պալատէ մուրագամ իքի գալէմ ճէան էլլի պին ատէ տճուվալ ֆիյաթը մուրագամասի իլէ թալիպի էօհտէսինտէ օլուպ թէմուզը ըումինին օթուզունճը ճիւմա իրթէսի կիւնի գարարը գաթիսի վիրիլէճէկինտէն՝ իթա իթմէկէ թալիպ օլանլէրին եէվմը մէզքիւրտէ տարը Շուրայի ասքէրիյէ կէմէլէրի։

1877 թէմուզ 26

Պապը Սէրասքէրի

Տիվանը պէլաղէի իանվանը նամէյ մէրհում

56 երեսէ բաղկացեալ տետրակ մ'է, յորում կը պարունակուին Հայաղգի նշանաւոր տաճկախօս բանաստեղծին երկերը։

Ամեն Հայ գրավաճառաց քով կը ծախուի 'ի դին մէկ քառորդ թղթադրամ։

ԱՐԻՒՆԱԼԻ ՄԱՐԳԻԶՈՒՀԻՆ

Սոյն գեղեցիկ վիպասանութեան, որ միայն երկու հատորէ կը բաղկանայ, երկրորդ հատորն ալ Իզմիրէն հասած ըլլալով, կը ծախուի Եէնի ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղ. և Եաղմաճեան գրատունը, և ուրիշ գրավաճառաց քով։ Դին 2 ֆրանք։

ՄԱՐԻՕՆ ՏԷԼՕՐՄԻ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ
ԿԱՄ
ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐՓԱՆՔ
ՀԵՂԻՆԱԿ
Լ. օԺԷՆ ՊԷ ՄԷՐՊԷ-Ը

Թարգմանեց Գր. Զէլէնկէրեան

Սոյն հրահանգիչ վէպին հայերէն թարգմանութեան Բ. Հատորը Պոլիս հասած ըլլալով, կը դանուի Ս. Ղ. և Եաղմաճեան գրատունը՝ Եէնի-Ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2, և ուրիշ գրավաճառաց քով։ Դին 2 ֆրանք։

Ամբողջ գործը չորս կամ հինգ հատորէ պիտի բաղկանայ։

ՀԱՄԱՌՕՏ
ԸՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԴՊՐՈՑԱՑ ՀԱՄԱՐ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Կաթէդրոնացոց, Յունաց, Հռովմայեցոց և Հայոց

ՄԱՍՆ Բ։

Թարգմանեց Մ. Մամուրեան

Այս ընտիր և ամենակարևոր դասագրքին Բ. մասը, որ 40 երեսէ կը բաղկանայ, աւարտած և Պոլիս հասած ըլլալով՝ կը ծախուի Եէնի-Ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղ. և Եաղմաճեան գրատունը, և ուրիշ գրավաճառաց քով։ Դին 2 ֆր. 50 սանթիմ։

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ ԳԱԹԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ
Ո Ր Ք

Ի Մոլդո-Վալաքիա, Հունգարիա և ի Լեհաստան

Ցօքչան տպեալ այս կարեւոր երկասիրութիւնը՝ որ ամեն հայու ուշադրութեամբ ընթերցման արժանի է, կծախուի մայրաքաղաքիս դրավաճառաց խանութները, 3 հինգնոց թղթադրամի։

ԱՌ ԱՐԵԳԱԿ

ՄԵԾ ՏՈՒՆ ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
ԵՒ ԴԵՂՕՐԷԻՑ
Վ. ԾԱՆՆԻ
Բերա Մեծ փողոց Աղաճամի թիւ 77

ԵՒ

Կ. Պոլիս Կամուրջի հրապարակը թիւ 1—2

Եւրոպիոյ առաջին գործարանաց հետ յարաբերութեամբ կապուած, և իւր դեղորէից ընտրութեամբն և գնոց չափաւորութեամբ հրաշակուած։

Մակի մթերանոց անուանի Հ. Նէսթլէ քիմիագէտին շինած Ֆն լաֆռէն, որոքփրիկ ալիք տղայոց, տկար կազմ ունեցող և հիւանդուութենէ ապաքինելոց միակ սննդարար ուտելիքէն համայն Եւրոպիոյ մէջ ընդունուած և ամեն գըլխաւոր բժշկաց հաւանութիւնն ստացած։

Հոն կը գտնուի նաև.

Քոտֆ (մատակի խմորեալ կաթ) որ մեծ համբաւ ունի Եւրոպիոյ մէջ և շատ կը փնտըռուի։

Սէ-լէֆ ՊԷ Քէնֆ, զուտ և մաքուր, ԲէլՖթիէ, Տիւպօսք, Ֆօպսթ և Էվանս Լէղէ ճարտար քիմիագէտներէն պատրաստուած։

Ձկան ի-ղ, զուտ, Քրիսթիանայի Բէթկէր Մէսէրի գործարանէն ելած։

Եղերդէ (հինտիպա) խահու-է, Լուտվիսպուրկի Հ. Ֆրանք գործարանէն ելած ստամոքսի ուժ տուող և ախորժակ բացող՝, որ հասարակ խահուէի հետ խառնելով՝ գինը մեծապէս կիջեցնէ՝ առանց համն ու հոտը փոխելու։

Արոէոպական սաւոյց ամեն ժամու մէջ։

Տէ-ժէնի ջու-ր, մաղերու անվրիպելի ներկ։

PILULES HOLLOWAY
ԴԵՂԱՀԱՏՈՒ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի, և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, նաև ջղային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար. կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Սրտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ'ունի. արիւնը մաքրելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ, և գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբը սրտախառնութիւն, կուծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կազեր, գլխի ցաւեր կը վանէ. մարսողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաքրուելով բոլոր այն աղտեղութիւններէ՝ որ շատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական դիրքը կզգենու։

ONGUENT HOLLOWAY
ՍՊԵՂԱՆԻ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւնք և վերք բուժելու մասին ունեցած պալսամական յատկութեանցը չհաւասարիր բնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վերքեր, ուռեցք, քաղցկեղ (չիրիփէնչէ), սրունից և ստեանց վերքեր կամ բոլորովին կանցնին և կամ կլաւանան. օգտակար է նաև հարբսխի, հաղի, սրտի բարտխման, մանաւանդ օդացաւ (եէլ) ըսուած հիւանդութեան։ Իւր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (սրբաճա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ի՛նչ աստիճան որ ըլլայ՝ կը դիմադրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մասնաւորապէս Պահէք-դափու Թաշ խանի կողմերը Պ. Գասապեանի դեղարանը՝ Նօ. 7՝ կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հինակն տոքթոր Հոլլօուէ ի Լոնտոն Օքսֆորտ փողոց թիւ 555։

ՊԱՏՄԱՆՔ ՓՈՒՆՋԻ

1.—Փունջը ՁՈՐԵՔՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի։

2.—Տարեկան բաժանորդագինն է միայն չորս արծաթ մէճիտ՝ կանխիկ վճարելի թէ՛ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ գաւառաց համար։

3.—Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի։

4.—Տեղական ու գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճար է

5.—Հատը 40 փարայ է, և կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց խանութները և ձեռքէ։ ծախողներու քով։

6.—Մանուցման տողը 3 ղրուշ է մէկ անգամի համար։ Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար։

7.—Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն-Տէր Հ. Ս. Ալաճաճեան, Կ. Պոլիս Ալաճա-Համամ Խալիլ խան միջին յարկ թիւ 19։

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ
Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՊՏԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ
Բիզա փաշա խան թիւ 3